

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Ստեփան Ասատրազյան

(ստորագրություն)



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲՇՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

(վերահաստատված)

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշել Աստարացյան

(ստորագրություն)



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

1. ՀԲԻ-ում սկսած 2012-13 ուսումնական տարվանից, ուսանողների ընտրությունը և ընդունելությունը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության «ՀՀ պետական և ոչ պետական բուհերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ» ապրիլի 26-ի 2012թ. N 597-Ն որոշման:
2. ՀԲԻ-ում ընդունելության գործընթացը ներառում է մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա ՀԲԻ-ում ընդունելության մրցույթի անցկացումը:
3. ՀԲԻ-ում ընդունելությունը կատարվում է տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության կողմից հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն (բուժական գործ՝ մասնագիտությամբ 060100 (091201.00.7) և ստոմատոլոգիա՝ 060200 (091101.00.7)):
4. Ընդունելության քննությունները կենտրոնացված և միասնական քննություններ են, որը անցկացվում է վերը նշված կարգով:
5. Դիմորդները պետք է հանձնեն երեք առարկայից ընտրության կարգով երկուսը (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն): Գիտելիքների գնահատումը կատարվում է 20 բալային համակարգով: Ընդունելության քննությունների ընթացակարգը հսկվում է հանձնաժողովի անդամների կողմից, թափանցիկ է, քանի որ ընթացքը ներկայացվում է տեսախցիկների միջոցով: Քննությունների գումարային արդյունքով դիմորդը մասնակցում է հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպվող մրցույթին: Յուրաքանչյուր տարի ինստիտուտը իրավունք ունի ընդունել մոտ 160 ուսանող, որից 70 (բուժական գործ՝ մասնագիտությամբ, իսկ 90 (ստոմատոլոգիա՝ մասնագիտությամբ):
6. ՀԲԻ-ում ընդունելության դիմում-հայտերի և փաստաթղթերի ընդունումը կատարվում է ընդունող հանձնաժողովի կողմից համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատած կարգի 22-27 կետերի:

7. Ընդունող հանձնաժողովի կազմը հաստատվում է ՀԲԻ-ի կառավարման խորհրդի կողմից ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ) պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը:
8. Դիմորդը փաստաթղթերը հանձնելու համար լրացնում է դիմում-հայտը որտեղ պարտադիր առաջինը հայտագրում է ՀԲԻ-ի ընտրած մասնագիտությունը:
9. Դիմորդը դիմում-հայտի հետ ներկայացնում է
  - 1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).
  - 2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).
  - 3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (գորակոչայինտարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորա-կան հաշվառման փաստաթղթերում՝ տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).
  - 4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.
  - 5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու:
  - 6) սույն կարգի 105-րդ և 106-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.
  - 7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները.
  - 8) ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: